ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ (IFB)

Հայաստանի Հանրապետություն
«Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր»
ՎԱՐԿ No. 5398-ԱՄ
Համակարգչային և այլ տեխնիկական միջոցների գնում ԱՄՀՆ, ՍԱՊԾ, ՆՈՐՔ ՓԲԸ, ԱՄՀԱՒ, ՋՊԳ և ՄԿՄԿ կարիքների համար

ICB No: SPAP II-G-2.1-4.1

1. Հայաստանի Հանրապետությունը վարկ է ստացել Համաշխարհային բանկից **«Սոցիալական Պաշտպանության Վարչարարության Երկրորդ Ծրագիր»** ֆինանսավորման համար, եւ նպատակ ունի օգտագործել այս վարկային միջոցների մի մասը « ***Համակարգչային և այլ տեխնիկական միջոցների գնում ԱՄՀՆ, ՍԱՊԾ, ՆՈՐՔ ՓԲԸ, ԱՄՀԱՒ, ՋՊԳ և ՄԿՄԿ կարիքների համար*** » պայմանագրի շրջանակներում վճարումների իրականացման համար:

2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը եւ ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ն սույնով հրավիրում է ներկայացնել փակ հայտեր պահանջներին համապատասխանող եւ որակավորված հայտատուներին ***Համակարգչային և այլ տեխնիկական միջոցների գնում ԱՄՀՆ, ՍԱՊԾ, ՆՈՐՔ ՓԲԸ, ԱՄՀԱՒ, ՋՊԳ և ՄԿՄԿ կարիքների*** համար:

3. Մրցույթը կանցկացվի «ՎԶՄԲ Վարկերի եւ ՄԶԸ վարկերի շրջանակներում գնումների վերաբերյալ» ՀԲ ուղեցույցների շրջանակներում Միջազգային մրցակցային մրցույթի (ICB) ընթացակարգերի համաձայն (Բանկի կողմից հրապարակված 2011թ.հունվարին) եւ հայտ կարող են ներկայացնել Ուղեցույցների շրջանակներում սահմանված թույլատրելի երկրներից բոլոր հայտատուները:
4. Հետաքրքրված թույլատրելի հայտատուները կարող են հետագա տեղեկատվություն ստանալ ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ից եւ ստուգել Մրցութային փաստաթղթերը 09:00-18:00-ը ստորեւ ներկայացվող հասցեով:
6. Հետաքրքրված հայտատուները *անգլերեն լեզվով* ամբողջ մրցութային փաստաթղթերի փաթեթը կարող են ստանալ ներքոհիշյալ հասցեով գրավոր դիմում ներկայացնելուց եւ վճարելով հիսուն (50) ԱՄՆ դոլարի օտարերկրյա մասնակիցների համար և 20,000 ՀՀ դրամ տեղական մասնակիցների համար: Վճարման ձեւն է՝ վերոնշյալ գումարի փոխանցումը ԱՖԾԿԿ-ի ստորեւ նշված հաշվի վրա: Փաստաթղթերի տպված տարբերակը կհանձնվի Հայտատուի ներկայացուցչին: Ի հավելումն տպագիր տարբերակին, փաստաթուղթը նաեւ անհրաժեշտության դեպքում կուղարկվի էլեկտրոնային տարբեակով: Տպագիր եւ էլեկտրոնային տարբերակների միջեւ անհամապատասխանության դեպքում կգերակայի տպագիր տարբերակը:

7. Հայտերը պետք է ներկայացվեն ստորեւ նշված հասցեով, մինչեւ դեկտեմբերի 01, 2015՝ ժ. 15:00 (տեղական ժամանակ): Հայտերը չի թույլատրվում ներկայացնել էլեկտրոնային տարբերակով: Ուշացված հայտերը կմերժվեն: Հայտերը կբացվեն հայտատուի ներկայացուցիչների ներկայությամբ մինչեւ դեկտեմբերի 01, 2015՝ ժ. 15:00 (տեղական ժամանակ): Բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն **Մրցութային երաշխիքով Լոտ 1-ի համար 13,000 ԱՄՆ դոլար, Լոտ 2-ի համար 3,000 ԱՄՆ դոլար, Լոտ 3-ի համար 2,000 ԱՄՆ դոլար, Լոտ 4-ի համար 3,000 ԱՄՆ դոլար** կամ ազատ փոխարկելի համարժեք արժույթով: Երկու կամ ավել լոտի համար դիմելու դեպքում, յուրաքանչյուր լոտի հայտի երաշխիքը պետք է ներկայացնել առանձին, քանի որ գնահատումը կատարվելու է ըստ լոտերի՝ համաձայն ՏՄՄ 36.3 (ա) ենթադրույթի:

Որակավորման պայմանները ներառում են՝

(ա) Ֆինանսական կարողություններ
Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային հավաստում առ այն, որ դա համապատասխանում է հետևյալ ֆինանսական պահանջ(ներ)ին:

- Պահանջված նվազագույն միջին տարեկան շրջանառությունը վերջին երեք (3) տարվա համար (2012-2014թթ.) պետք է յուրաքանչյուր լոտի համար պետք է լինի առնվազն՝ 1,275,000 ԱՄՆ դոլար Լոտ 1-ի համար, 260,000 ԱՄՆ դոլար Լոտ 2-ի համար, 200,000 Լոտ 3-ի համար, 260,000 ԱՄՆ դոլար Լոտ 4-իհամար: Մեկից ավելի Լոտերի համար հայտ ներկայացնելու դեպքում տարեկան միջին շրջանառությունը վերջին երեք (3) տարվա համար (2012-2014թթ.) պետք է լինի յուրաքանչյուր Լոտի համար պահանջվող տարեկան միջին շրջանառությունների հանրագումարը: Օրինակ՝ Լոտ 1 և Լոտ 2 համար պահանջվում է 1,535,000 ԱՄՆ դոլար տարեկան միջին շրջանառություն: Բոլոր

Լոտերի համար տարեկան միջին շրջանառությունը վերջին երեք (3) տարվա համար (2012-2014թթ.) պետք է լինի 1,995,000.00 ԱՄՆ դոլար:

- Հայտատուն պետք է տրամադրի իր ֆինանսական հաշվետվությունները վերջին երեք (3) տարիների համար:

(բ) Փորձ և տեխնիկական կարողություն

Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային վկայություն առ այն, որ նրա առաջարկած Ապրանքները բավարարում են օգտագործման հետևյալ պահանջ(ներ)ին.

- նմանատիպ սարքավորումների մատակարարման նվազագույնը հինգ (5) տարվա փորձ:
- Վերջին երեք (3) տարվա ընթացքում նմանատիպ բնույթով նվազագույնը մեկ (1) հաջողությամբ կատարված պայմանագիր Հայտում նշված Գնառաջարկին համարժեք գումարով՝ նշելով գնորդին, պայմանագրի գինը և մատակարարված ապրանքներն ու ծառայությունները: Երկու կամ ավելի Լոտերին դիմելու դեպքում նվազագույնը մեկ (1) հաջողությամբ կատարված պայմանագիր՝ յուրաքանչյուր Լոտի համար ներկայացված գնառաջարկի հանրագումարը:
- Օտարերկրյա Հայտատուն, ով չի գործում Հայաստանի տարածքում, պետք է ունենա տեղական գործընկեր՝ հետվաճառքային սպասարկման ծառայություններ իրականացնելու նպատակով
- Արտադրողը, ով չի գործում Հայաստանի տարածքում, պետք է ունենա իր պաշտոնական հավաստագրված սպասարկման կենտրոնը Հայաստանում:

Համատեղ ձեռնակությամբ դիմելու դեպքում, ձեռնարկության յուրաքանչյուր անդամ պետք է համապատասխանի ֆինանսական և փորձի և տեխնիկական կարողությունների պահանջներին:

(գ) Հայտատուն պետք է ներկայացնի փաստաթղթային հավաստում առ այն, որ իր կողմից մատակարարվող ապրանքները համապատասխանում են հետևյալ պահանջներին՝

- Սույն Պայմանագրով մատակարարվող ապրանքները պետք է ունենան ISO 9001:2008 հավաստագրեր կամ համարժեք՝ Պահանջների ժամանակացույցում նշված ապրանքերի համար:

Վերոշարադրյալ հղում կատարված հասցեն հետեւյալն է՝

պրն. Էդգար Ավետյան
Գործադիր տնօրեն
«Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ ԱՖԾԿԿ
ՀՀ ֆինանսների նախարարություն
Տիգրան Մեծ 4, Երեւան, Հայաստանի Հանրապետություն
Հեռ՝ (374-11) 910 581
Ֆաքս՝ (374-10) 545 708
Էլ.հասցե՝ info@ffpmc.am

Հաշվեհամարի տվյալներն են.

Արտերկրից փոխանցումների համար;

Intermediary bank: **JPMorgan Chase Bank, N.A., New York, NY USA**
SWIFT BIC: **CHAS US 33**
Account: **001 1 010782**
Beneficiary's bank: **Central Bank of Armenia, Yerevan, Armenia**
SWIFT BIC: **CBRA AM 22**
Beneficiary: **Ministry of Finance of RA, Foreign Financial Project Management Centre**
Account: **900000900572**

ՀՀ տարածքից փոխանցումների համար;

Ստացողը՝ **ՀՀ ՖՆ ԱՖԾԿԿ ՊՀ**
ՀՎՀՀ **180255188**
Ստացողի բանկի անվանումը՝ **ՀՀ ՖՆ Կենտրոնական գանձապետարան**
Բանկային հաշվի համարը՝ **900000900564** (ՀՀ դրամ)